

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏՈՒՐԻԶՄ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

բ.գ.թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏՈՒՐԻԶՄԻ ՎԵՊԸ*

Մի կողմից մոդեռնիզմը 19-րդ դարի գրականության որոշ ավանդույթների շարունակություն էր, մյուս կողմից՝ ավանդապաշտության ժխտում: Թերևս ոչ մի հոսանքում ժխտողականությունն այնքան անվերապահ չէր, որքան ֆուտուրիզմում: Թե՛ իտալացի, թե՛ ռուս, թե՛ հայ ֆուտուրիստները ավանդապաշտության ժխտման մեջ ուղղակի ծայրահեղության էին հասնում, թեև այդ ժխտումը բացառապես արտահայտվում է հանգանակներում: «Ապտակ հանրային ճաշակին» հանգանակում, օրինակ, ռուս ֆուտուրիստները պահանջում էին «արդիականության շոգենափից դուրս նետել Պուշկինին, Դստոևսկուն, Տոլստոյին ու մյուսներին»¹, վերապահում չէր արվում նույնիսկ սիմվոլիստներին՝ Սոլոգուբի, Բլոկի, Ռեմիզովի և ուրիշների հանդեպ: Ավանդապաշտության անվերապահ ժխտման միտումը ցայտուն էր նաև արևելահայ ֆուտուրիզմի հանգանակում՝ «Երեքի ղեկարացիայում» (Աբով-Չարենց-Վշտունի միավորումը կրկնօրինակում էր իտալացի ֆուտուրիստների Պապինի-Սոֆֆիչի-Պալացցեսկի եռյակին), ֆուտուրիստ Չարենցը մերժում էր սիմվոլիստ Տերյանին, թիֆլիսահայ ֆուտուրիստ Կարա-Դարվիշը պատրաստ էր այրել «աշխարհի բոլոր հանձարների ստեղծագործությունները՝ Ծեքսպիրից սկսած մինչև Տոլստոյ»²: Հիրավի «ոչ մէկ գրական վարդապետութիւն կրնայ դառնալ լեղափոխական ու գրաւիչ եթէ նոյն ատեն չի յաւակնիր արուեստը սկսիլ իրմով»³:

Որքան էլ մոդեռնիստները փորձեին հերքել անցյալի գրական ավանդույթները, արձակը, հատկապես վեպը, փորձարարական որոնումներով ու ձեռքբերումներով հանդերձ, ավելի շատ էր հենվում անցյալի գրական ավանդույթների վրա, քան պոեզիան: Վերջինս,

* Հոդվածն ընդունվել է տպագրության 05.02.2019:

1 <http://www.futurism.ru/a-z/manifest/slap.htm>

2 Կարա-Դարվիշ, Օրերից առաջ, Թիֆլիս, 1928, էջ 67:

3 Գրիգոր Պրլտեան, Հայկական ֆուտուրիզմ, Եր., Սարգիս Խաչենց, 2009, էջ 7:

կարծես, ավանդույթի խախտման հնարավորությունների մեջ ավելի ազատ է, մինչդեռ ստեղծել վեպ՝ ամբողջությամբ քայքայելով վիպական կառույցի բոլոր բաղադրամասերը (թեև 20-րդ դարի երկրորդ կեսին արվեցին նաև այդպիսի փորձեր. օրինակ Ֆիլիպ Սոլերսի «Դրաման»), գրեթե անհնար է. անհնար է արձակում ամբողջությամբ ժխտել ավանդույթը: Եվ հենց դա է պատճառը, որ մոդեռնիզմի այն հոսանքները, որոնց հիմնական ժանրը պոեզիան էր և ժանրի իրավասություն ստացած հանգանակը, ինչպես դադաիզմը, ֆուտուրիզմն ու սյուրռեալիզմը, անցյալի մերժման մեջ ավելի անզիջում ու ծայրահեղական էին: «Ապագայապաշտութիւնը,- նկատում է Գրիգոր Պլտյանը,- արդիական առաջին ու միակ շարժումը չէ որ կը բանի հանգանակներու հրապարակութեամբ, բայց ան այդ գործունէութիւնը կը դարձնէ գրական միջավայրի մէջ տեական միջամտութեան կերպ. գործելակերպ-մտածելակերպ: Մարինետտի ինքն իրեն կը վերագրէր «հանգանակներ գրելու արուեստը»⁴: Հատկապես ծավալուն արձակը բնորոշ էր մոդեռնիզմի այս հոսանքներին: Ո՛չ Լուի Արագոնի, ո՛չ Ռոնե Կրեյլի, ո՛չ Անդրե Բրետոնի վեպերը չեն արտահայտում սյուրռեալիզմի մանիֆեստային դրույթները, դրանցում բացակայում է սյուրռեալիզմի ամենահիմնական՝ գրի ինքնահոսության պահանջը, իսկ սյուրռեալիզմի արձակը ժանրի կայուն կաղապար ընդհանրապես չունի. դրա քրեստոմատիկ օրինակը Բրետոնի ու Ֆիլիպ Սուպոյի «Մագնիսական դաշտերն» է, որը որևէ ժանրի մեջ անհնար է զետեղել (հենց այդ պատճառով ետմոդեռնիստները ժանրից դուրս գրականությունը բնորոշում են տեքստ հասկացությամբ): Դադաիստներն ու ֆուտուրիստները ևս վեպի նոր ըմբռնում չբերեցին: Նրանց հանգանակները կարող էին ծնունդ տալ այլ հանգանակների ու բանաստեղծությունների, բայց ոչ քիչ թե շատ ավանդույթ ենթադրող այնպիսի մի ժանրի, ինչպիսին վեպն է: Կարա-Դարվիշի վեպերի առթիվ Գրիգոր Պլտյանն արդեն նկատել է, թե «ապագայապաշտի մը համար արձակի նման հետեւողական վիպային կամ պատմողական արտադրութիւն ինքնին բաւական անսովոր է»⁵:

Ֆուտուրիզմը իտալական և ռուսական գրականության մեջ վիպական մի քանի դրսևորում է ունեցել: Իտալական ֆուտուրիզմի վեպի

4 Գրիգոր Պլտյան, Հայկական ֆուտուրիզմ, Եր., Սարգիս Խաչենց, 2009, էջ 17: 5 Նույն տեղում, էջ 292:

եզակի նմուշներից կարելի է առանձնացնել ուղղության հիմնադիր համարվող Ֆիլիպպո Թոմմազո Մարինետտիի «Ֆուտուրիստ Մաֆարկան» (Mafarka il futurista, 1910), որ հեղինակն անվանել է «աֆրիկյան վեպ» և Ալլո Պալացցեսկու «Պերելայի օրենսգիրքը» (Il Codice di Perela', 1911), որ հեղինակն անվանել է «ֆուտուրիստական վեպ»: Իր միակ ֆուտուրիստական վեպից հետո Պալացցեսկին, որին գրականագետ Ջուզեպպե Նիկոլետտին սյուրռեալիստների նախակարապետներից մեկն է համարում⁶, փորձարարական տարրերով իրապաշտական վեպեր է գրել: Մարինետտիի վեպը, «չնայած ֆուտուրիզմի՝ գրադարաններն ու թանգարաններն այրելու էպատաժային կոչերին, հեղինակի վիթխարի մշակութային և ընթերցողական պաշարի մասին է վկայում»⁷ և տատանվում է «սիմվոլիստական գեղագիտության ու ավանգարդի գաղափարագիտության»⁸ միջև: Մարինետտիի էկզոտիկ վեպը, որ Իյա Չդանսիչն իրավացիորեն համարում էր «վատ կառուցված» ստեղծագործություն, քանի որ «ձևն ու պոետական խնդիրները» հրատակ չեն գիտակցված⁹ «պատմում» է աֆրիկյան արքա Մաֆարկայի մասին է և լի է անարխիստական լոզունգներով, պատերազմի, բռնության և սեռական էպատաժային տեսարաններով, և իրականում կարելի է համարել ֆուտուրիստական մանիֆեստների վիպականացում:

Պալացցեսկու վեպի (հակավեպի, վեպ-այլաբանության, հեքիաթ-վեպի) հերոսը՝ Պերելան, մսից ու արյունից կազմված մարդու կերպար է, այլ բուխարում երեսուներեք տարի մնացած (անշուշտ Պերելան քրիստոսի այլաբանությունն է) և ի վերջո ելած ծխեմարդ, որ երկրի տիրակալի կողմից հանձնարարություն է ստանում թագավորության օրենսգիրքը գրել, բայց շուտով նրան սկսում են հալածել, և նա՝ որպես «վերջին, անհասկանալի աստված, նորից համբառնում է երկինք՝ մարդկանց թողնելով այն, ինչ իրենց է հետաքրքրում՝ մի զույգ անպետք ձուքավոր կոշիկ»¹⁰: Պալացցեսկու վեպը ֆուտուրիստներին և հատկապես Մարինետտիին հետաքրքրել էր ոչ որպես ֆուտուրիստական հանգանակների

6 Палацески А., Кодекс Перела, Противоболь, Поэзия, М; Река Времени, с. 8.

7 Маринетти Ф.Т., Футурист Мафарка. Африканский роман, Издание книжного магазина «Циолковский», М; 2016, с. 11-12.

8 Լույն տեղում, էջ 8:

9 Зданевич И., О футуризме// Зданевич И., Футуризм и всечество. 1912-1914, В 2-х томах, т. 1, М; Гилея, 2014, с. 65.

10 Палацески А., Кодекс Перела, Противоболь, Поэзия, М; Река Времени, с. 27.

հարազատ ստեղծագործություն, այլ՝ իբրև նոր շունչ, իր ձևով ու բովանդակությամբ դարաշրջանին համահունչ ստեղծագործություն¹¹:

Իսկ ինչքանով են ֆուտուրիստական Կարա-Դարվիշի (իսկական անունը՝ Հակոբ Գենջյան, որպես գրական կեղծանվան մաս հավանաբար իտալացի ֆուտուրիստ Կարլո Կարրաի ազգանունն է վերցրել) «Երվանդ Գոշ» (1911), «Կյանքի ջութակը» (1917), «Օրերից առաջ» (1928) փոքրիկ վեպերը, որոնք ոչ մի ընդհանրություն, նմանություն չունեն իտալական ֆուտուրիզմի վերոհիշյալ վեպերի և իրենց պատումի եղանակով ու «յղացմամբ բառական դասական կաղապարով արտադրություններ են, որոնց մէջ կարելի է գտնել Անդրէեւէն, Արցիբաշեւէն»¹² և առավելապես 19-րդ դարի դասական (հատկապես նատուրալիզմի. Դարվիշի վեպերը հիմնականում նատուրալիզմի գեղագիտության և ավանգարդի գաղափարագիտության համադրություն են կազմում) արձակի հետքեր: Արդյո՞ք դրանք վեպի ավանդական կաղապարից շեղվում են «միայն սեղմելով, խտացնելով կնճիռը, նուազեցնելով կերպարներու թիւը, սխեմայացնելով հոգեբանական տարրը»¹³: Խորհրդային գրականագիտությունն այդ վեպերում միայն դեկադենտական տրամադրություններ, «անհատի մեջ նախամարդկայինն առաջ մղելու տենդենց, ջլախտավոր տոփանքներ, բնազդների մանրամասնում, բարձր գաղափարների ստորնացում», «սեքսուալիզմ» ու «անսքող նատուրալիստական նկարագրություններ» էր տեսնում¹⁴, ուստի այդ ստեղծագործություններն այդպես էլ չվերահրատարակվեցին:

Կարա-Դարվիշի վեպերն իրոք դասական կաղապար ունեն, բայց դրանց հերոսները ֆուտուրիստական և արդիապաշտական գաղափարների կրողներ են, ավանդականն ու ավանդապաշտությունը հերքողներ, և առաջին հերթին այդ կերպարներում ընդգծված է անարխիզմը՝ հինը՝ հին մշակույթի, հին աշխարհայացքի ու հասարակական կազմակերպվածքի ժխտողական կեցվածքը, հեղափոխական ոգին, որ բնորոշ էր ֆուտուրիստներին: Դարվիշի վեպերի հերոսները՝ Երվանդ Գոշը («Երվանդ Գոշ»), Սաթյանը («Օրերից առաջ»), Լյուդմիլան

11 Նույն տեղում, էջ 25:

12 Պրլտեան Գ., Հայկական ֆուտուրիզմ, Եր., Սարգիս Խաչենց, 2009, էջ 200:

13 Նույն տեղում, էջ 296:

14 Հայ նոր գրականության պատմություն, ՀՍՍՌ ԳԱ Իրատ, 1962, էջ 727:

(«Կյանքի ջութակը») մշտապես բախվում են հին աշխարհայացքը կրողների հետ և վիպական «կոնֆլիկտը» հյուսվում է հենց այս բախման շուրջ, թեև դասական իմաստով Կարա-Ղարվիշի վեպերում արդեն առկա է մոդեռնիզմին բնորոշ վիպական կոնֆլիկտի բացակայությունը, հերոսները տատանվում են մտքի (զաղափարական) և հոգու (զգացական) բևեռների միջև, և մշտապես նրանց մեջ հաղթանակում է բնազդն ու զգացականը: Ղարվիշի վեպերում կինը մարմնավորում է կիրքն ու հեշտասիրությունը՝ «լիբիդոն», զսպող (Ճնշող) զգայական սկիզբը, իսկ տղամարդը՝ զաղափարը: Գրիգոր Պըլտյանը ֆուտուրիզմին նվիրված ուսումնասիրության մեջ հիշատակում է ֆրանսիացի կին ֆուտուրիստ բանաստեղծուհի Վալենտինա դե Սեն-Պուանի 1913-ին հրապարակած «Հեշտասիրության ֆուտուրիստական հանգանակը», փորձելով հեշտասիրությունը դիտարկել իբրև ֆուտուրիզմի հասկացություն: Իհարկե այն առկա է նաև Մարինետտի վեպում, բայց հարցը կարելի է նաև ավելի լայն՝ ընդհանրապես բարոյականի ու անբարոյականի սահմանները ջնջող մոդեռնիզմի և ֆրոյդիզմի՝ մոդեռնիզմի վրա թողած ազդեցության համատեքստում քննել՝ համեմատելով Կարա-Ղարվիշի և 20-րդ դարասկզբի անգլիական մոդեռնիզմի՝ ֆրոյդիզմի ազդեցությունը կրած հեղինակներից մեկի՝ Դեյվիդ Հերբերթ Լոուրենսի վեպերի միջև: Լոուրենսն իր «Հոգեվերլուծությունն ու անգիտակցականը» ուսումնասիրության մեջ գրում է. «Երբեք կինը չի կարող իմանալ և զգալ այն, ինչ գիտե և զգում է տղամարդը: Այդպես էլ տղամարդը երբեք չի կարող իմանալ ու զգալ այն, ինչ գիտե և զգում է կինը: Տղամարդը, եթե նույնիսկ առավելապես պասիվ կամ կանացի բևեռին է պատկանում, միևնույն է՝ տղամարդ է մնում, և չի կարող ունենալ այնպիսի մի զգացմունք, որ բնորոշ չէ իր սեռին: Գրող կամ հոետոր կինն իր հերթին չի կարող օգտագործել այնպիսի մի բառ, որ տղամարդուց սովորած չլինի: Տղամարդը զգացմունք է սովորում կնոջից, կինը ռացիոնալ գիտակցություն՝ տղամարդուց: Եվ այդպես կլինի ընդմիշտ: Հետևաբար կինը մեկընդմիշտ պիտի շարունակի ապրել զգացմունքով, տղամարդը՝ նպատակի բնածին գիտակցությամբ: Զգացմունքն ինքնին նպատակ ու ճշմարտություն է կնոջ, բայց բնավ ոչ տղամարդու համար: Անգամ այն տղամարդը, որ փորձում է զգացական «էպիկուրյան» լինել, իրականում զգացմունքի տառապյալ է դառնում, այնպիսին, ինչպիսին Մոպասանն ու Օսկար Ուայլդն են եղել:

Երբեք կինն ամբողջությամբ չի կարող հասկանալ տղամարդու նպատակասլացությունը, նրա ավելի խորունկ ոգին, այնպես, ինչպես տղամարդը չի հասկանա զգացմունքի սրբազան նշանակությունը կնոջ համար»¹⁵: Լոուրենսի, 1910-ական թվականներին գրված վեպերի տղամարդ և կին հերոսներն իրարամերժ ու ներհակ բեռներ են, կինը հավերժ զգացականության, իսկ տղամարդը գաղափարի կրող, և կինը մղվում է դեպի այն տղամարդը, որն ավելի մոտ է բնությանը, խորհրդանշում է բնության կոպիտ ուժն ու հեշտասիրությունը: Իր վեպերում Լոուրենսը կոչ էր անում անձնատուր լինել բնության բնազդական ընկալման «մութ աստվածություններին», զգացական տարերքին ու հեշտասիրությանը՝ ի հրաժարումն 19-րդ դարի ռացիոնալիզմի: «Կինը մարդու մեջ արթնացնում է գազանը և քնեցնում, թմրեցնում է բանականությունը, մինչև անգամ դատարանը, ժամանակակից օրենքը այդ ունի առաջը – խանդից առաջացած ոճրագործությունը շատ անգամ արդարացնում է: Կինը հարուցանում է մարդու մեջ բոլոր զգայական բնազդները, իսկ մարդ, երբ գործում է զգայականության ազդեցության տակ, բոլորովին մոռանում է իր աստծուն՝ խիղճը, ներսը նորա մեջ քարանում է, մնում է դուրսը՝ մարմինը, արյունը, ոսկորը, իսկ ամեն ինչ, ինչ-որ գործվում է հանուն նորա զգացողականության, նորա մղումով, բնությունը արդարացնում է: Սոված մարդը, զորեղ խանդից, կրքից, անասնական կրքից բռնված մարդը, երբ փշրում է ձեր դուռը, թալանում է ձեր ունեցվածքը, ձեր գանձը, ձեր գեղեցիկ կնոջը, ես արդարացնում եմ, արդարացնում է ինքը բնությունը: Կինը չի սիրում ձգնավորին, ներքինուն, որովհետև նորա մեջ մեռած է կյանքը՝ զգայականությունը, մարմինը, և ընկնում է առաջին իսկ գեղեցիկ, կոպիտ, բիրտ գազանի գիրկը»¹⁶, - ասում է Կարա-Դարվիշի «Օրերից առաջ» վեպի հերոսներից մեկը կնոջ մասին:

Լոուրենսի «Լեդի Չաթերլիի սիրելեկանը» վեպի հերոսուհին՝ Կոնին, հաշմանդամ դարձած ամուսնուն դավաճանում է բնության կոպիտ ու բիրտ ուժը մարմնավորող, անտաշ, մտավոր զարգացման ցածր աստիճանում գտնվող մարդու՝ այգեպանի հետ, որն ընդամենը սեռապես ուժեղ և մարմնապես առողջ տղամարդ էր: Դարվիշի «Կյանքի

15 Lawrence D. H., *Psychoanalysis and the Unconscious and fantasia of the Unconscious*, Dover Publications, 2006, p. 137-138:

16 Կարա-Դարվիշ, Օրերից առաջ, Թիֆլիս, 1928, էջ 28:

ջութակը» վեպի հերոսուհին՝ Լյուդմիլան, որ իր կենսազուրկ ամուսնուն մտքի մեջ անընդհատ նմանեցնում է խլեզի, որոշում է տրվել երիտասարդ Սաշային՝ երկար տատանումներից հետո հասկանալով, որ անբարոյականությունը հենց բնազդը ներսում ձնշելն է, և ազատ է արձակում իր զսպված ու ձնշված հեշտասիրությունը:

Եթե դասական, ասենք Ֆլոբերի, Տոլստոյի, թեկուզ Նար-Դոսի վեպերն իրենց զգացմունքին հետևած կանանց բախումն են պատկերում բարոյականության հանրային պատկերացումների հետ, սիրո զգացմունքի վեհությունն ու հանրային պատկերացումների հետ բախման ողբերգությունը, ապա մոդեռնիզմի վեպը պատկերում է բարոյական չափանիշների անկումը, քողազերծում սիրո անվան տակ թաքնված բնազդներն ու հեշտասիրությունը: Բարոյականության պատկերացումներն այլևս հնի՝ 19-րդ դարի վերապրուկներ են, և Սալարյանը՝ Լյուդմիլայի ամուսինը, խորհրդանշում է հենց այդ հինն ու քարացումը: Կարա-Դարվիշի վեպերում բարոյականության պատկերացումներն արդեն համարվում են հին, և այդ կերպ են կիրքն ու հեշտասիրությունը խորտակում հինը: Դարվիշի վեպերում արդեն նկատվում է մոդեռնիզմին բնորոշ բարոյականի և անբարոյականի անորոշությունը: Լոուրենսի վեպերը նաև բնապաշտական են (բնապաշտության և մոդեռնիզմի առնչությունները կարելի է դիտարկել նաև Համսունի վեպերում): Կնոջ և տղամարդու մերձեցումը Կարա-Դարվիշի վեպերում տեղի է ունենում միշտ բնության գրկում: Լոուրենսի հերոսը այգեպան է, իսկ Լյուդմիլան Սաշային տրվում է այգում: Սիրո, բնազդի և սեռական տեսարանները Կարա-Դարվիշի վեպերում ոչ թե բնակարաններում, կամ փակ տարածքներում, այլ հենց բնության գրկում են նկարագրվում, ասես հաստատելով, որ մարդը բնության օրինաչափությունների ներսում է գործում, նրանց կամակատարն է և իր մտքի ու ժող նույնիսկ չի կարող ազատվել բնությունից: «Օրերից առաջ» վեպում տիկին Կարակաշի և Կաֆյանի սիրո օթևանը ևս բնությունն է, «Երվանդ Գոշ» վեպում Երվանդին նույնպես բնությունն է մերձեցնում. ի վերջո բնությունը հաղթում է բարձր գաղափարներով տոգորված և զգացական իր մեջ շարունակ ձնշող Երվանդին: Դարվիշի տղամարդ հերոսներն սկզբում տարված են արդի գաղափարախոսությունների հովերով, բայց նրանց մեջ աստիճանաբար հաղթանակում է բնությունն ու բնազդը՝ խորտակելով բանականության ու ռա-

ցիոնալիզմի ամբարտակաները: Այսպիսով, «լիբիդոն», ինչպես Լուրենսի, այնպես էլ Կարա-Դարվիշի մոտ դառնում է վիպական սյուժեի հիմնական խթան: Դարվիշի հերոսները երկխոսություններում պարզապես արտահայտում են իրենց մոդայիկ հայացքները, հայտարարում անարխիստական (Սաթյան, «Օրերից առաջ») կամ անհատապաշտական (Երվանդ Գոշ) գաղափարները, բայց գաղափարախոսությունը նրա հերոսների մոտ կեցվածքից այն կողմ չի անցնում, չի փոխվում կերպարի վարքագծի, սյուժեն չի ընթանում գաղափարախոսության ուղիով, քանի որ Դարվիշի հերոսների մոտ բացակայում է գաղափարն ու համոզմունքը կյանքի կոչելու՝ հեղափոխական կամքը: Հարկ կա՞րդյոք շեշտելու, որ վեպի էջերում գրույցներից այն կողմ չանցնող հայացքները մոդեռնիզմի ժամանակաշրջանին բնորոշ գաղափարախոսությունների դրսևորումներ են: Անարխիզմն, օրինակ, բնորոշ էր 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի փիլիսոփայությանն ու գրական հոսանքներին և հեղափոխությունն ինքը անարխիզմի ամենամեծ արտահայտությունն էր հենց: Սյուրռեալիստները ևս մոտ էին անարխիզմին, բայց գրական բոլոր հոսանքներից անարխիզմին առավել մոտ էր ֆուտուրիզմը: Ֆուտուրիզմին բնորոշ է «նախապատվությունը գործողության, շարժման, արագության, ուժի և ագրեսիայի պաշտամունքը, սեփական ես-ի մեծարումն ու արհամարհանքը տկարի հանդեպ, ուժի գերակայության հաստատումը, հափշտակումը պատերազմով ու ավերումով: Այս իմաստով ֆուտուրիզմն իր գաղափարախոսությամբ մոտ էր ինչպես աջ, այնպես էլ ձախ ռադիկալներին՝ անարխիստներին, ֆաշիստներին ու կոմունիստներին, ովքեր կողմնորոշված էին անցյալի հեղափոխական տապալումը»¹⁷:

«Ով եմ ես» «ինքնակենսագրական» հանգանակում Կարա-Դարվիշն ինքն է հայտարարում. «Ես անարխիստ եմ - մահ, որոտ եւ կայծակ եմ բոլոր քարացումների համար»¹⁸): Անարխիստական աշխարհայացքը, որ տարբեր ձևերով արտահայտվում էր քսաներորդ դարասկզբի արվեստի և գրականության մեջ, թե՛ իբրև գեղագիտական լոգոնոզ ու հանգանակ, թե՛ իբրև թեմա, թե՛ իբրև հերոսների հայացքներ և թե՛ իբրև գրական կառույցի կազմալուծում, համաշխարհային

17 <https://www.proza.ru/2011/05/07/1435>:

18 <http://hraparak.am/?p=77341&l=am/kanon+grchutyan+kara-darvish?vov+em+es>:

քաղաքական և հասարակական կյանքում տիրող արժեքային համակարգի քաոսի արդյունք էր: Անարխիզմը գալիս է ոչնչացնելու ցանկացած կազմակերպվածք, որը բխում է ռացիոնալիզմից, փոխարենը հաստատելով զգացմունքի և զգացականի կամայականությունը, տարերքն ու բնազդը: «Օրերից առաջ» վեպի հերոսները հեղափոխական գաղափարներով տոգորված մարդիկ են: «Մի շարժումով բախտավոր դարձնել մարդկանց՝ մարդկությունը անկարելի է, ցնորք է, երազ է: Այդ հարցը կլուծվի կամ ավելի ձիշտ ասած լուծման իսկական ծանապարհի վրա կընկնի միայն այն ժամանակ, լսո՞ւմ եք, միայն այն ժամանակ, որի մեջ խորապես համոզված եմ և դուք էլ, շատերն էլ, թերևս բոլորն էլ համոզված են, կամ թե չէ ազատ կերպով զգում են, միմիայն այն ժամանակ, երբ միանգամայն, իսպառ վերջ տրվի արհեստական ուժին, իշխանության, ավելի ձիշտը ասած որ է պետության կամ պետական գաղափարին, երբ մարդիկ միանան, դաշնակցեն ազատ, անբռնազրոսիկ սիրո և հարգանքի զգացմունքից դրդված և այդ զգացմունքների վրա էլ հիմնվելու է բոլոր մարդկային հարաբերությունները»¹⁹: Պետության գաղափարի այս ժխտումը, պետական ինստիտուտի կործանման այս անարխիստական կոչը որքան էլ հումանիստական թվա, ըստ Սաթյանի, պիտի փոխարինվի զգացմունքների վրա հաստատված հարաբերություններով: Ոգու ծանաչողությունից բխող օրենքներն ու օրենքների վրա հիմնված պետական ինստիտուտը փոխարինել զգայական հարաբերությունների քաոսով. սա է «Օրերից առաջ» վեպի հերոսների իդեալը: Սակայն Կարա-Ղարվիշի անարխիզմն այնքան էլ ծայրահեղական չէ, «Կյանքի ջութակը» վեպում հեղինակը ցույց է տալիս նաև հասարակական համակեցության միկրոմոդելի՝ հաշվարկի վրա կառուցված ընտանիքի (և ոչ թե ընդհանրապես ընտանիքի, ինչը խոսում է հեղինակի անարխիստական հայացքների չափավորության մասին) կործանման անհրաժեշտությունը՝ սեռերի անկեղծ սիրո և անզուսպ կրքի վրա հիմնված անհավատարմությունը գերադասելով հաշվենկատ ամուսնությունից:

Բանալի բառեր. - Կարա Դերվիշ, ֆուտուրիզմ, շարժում, գաղափար, վեպ:

19 Կարա-Ղարվիշ, Որերից առաջ, Թիֆլիս, 1928, էջ 106:

*Հոդվածը տպագրվում է «Գիտության և կրթության հայկական
ազգային հիմնադրամ» դրամաշնորհային ծրագրի (ANSEF)
շրջանակներում:*

Грация Сарибекян
Роман армянского футуризма

Резюме

Цель настоящей статьи - исследовать футуристический роман и его проявления в армянской литературе. Автор статьи говорит об основных жанрах футуризма и замечает, что роман необычный жанр для футуризма, так как он предполагает определенную традицию жанровых условностей. Многие из модернист романистов в том или ином степени продолжали традиции прошлого, в то время как дух отрицания является сутью футуризма. В статье рассматриваются особенности романа футуризма и модернизма в целом, анализируются романы Кара-Дарвиша как сочетание реалистической и натуралистической эстетик и авангардистской и анархистской идей.

Ключевые слова: Кара Дервиш, футуризм, движение, идея, роман

Hrachya Saribekyan
Armenian Futurist Novel

Summary

The focus of the article is on the futurist novel. The author of the article speaks about the main genres of Futurism and emphasizes that the novel is an unusual genre for Futurism, for it implies certain traditions of genre-based conventionalities. Most of the modernist novelists continued the traditions of past to varying degrees, while the spirit of negation was the main principle of Futurism. He examines the peculiarities of futurist novel and modernist novel in general, as well as analyzes the novels by Kara-Darvish as a combination of realist and naturalist aesthetics and of avant-garde and anarchist ideas.

Keywords: Kara Dervish, futurism, movement, idea, novel